հայտերի բացման օրը 03/20/2019 <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ
հայտերի բացման ժամը 09:30 թիվ՝ 2 ք. Երևան, Վարդանանց փակուղի 8Ա.

Արձանագրություն

<<ՀԶԿ-ԳՀԾՁԲ-19/7> ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

գնահատող հանձնաժողովի նախագահ
/վարչատնտ. բաժնի պետ/ Աշոտ Հյուսիսյան
հանձնաժողովի անդամներ -
/հաշվապահ/ Արմեն Օթարյան
/գույքի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ/ Միքայելյան Միքայելյան
/գույքի կառավարման բաժնի մասնագետ/ Նվարդ Վարդանյան
/պարտքերի վերլուծությունների, մոնիթորինգի և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/ Հայրապետ Բարսեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Հյուսիսյան

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 03/12/2019թ. հրապարակվել է www.armeps.am համակարգում և տեղեկագրում:

1.2 Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝

ԱՅ ԹԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ Հարկային կոդ 00895184, Էլեկտրոնային փոստ sedrakyantigran@mail.ru
Անատոլ Ղազարյան Լևոնի Ա/Ձ Հարկային կոդ 51702539, Էլեկտրոնային փոստ masterservise777
Բևեռային ուղի ՍՊԸ Հարկային կոդ 02228306, Էլեկտրոնային փոստ beverayin.ughi@yahoo.com
Այ Սերվիս ՍՊԸ Հարկային կոդ 00124361, Էլեկտրոնային փոստ tenderiservice@gmail.com, Հեռախոսահամար +37494438647
Ստարտկոպի ՍՊԸ Հարկային կոդ 01262714, Էլեկտրոնային փոստ arturik-tom@mail.ru
Ա/Ձ Հայկ Բաղդասարյան Հարկային կոդ 82414786, Էլեկտրոնային փոստ hayk.baghdasaryan@mail.ru, Հեռախոսահամար 099837027

2. **Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության մասին և մերժված հայտերի մասին**

2.1 Մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Հայտ ներկայացրած ԱՅ ԹԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն, Անատոլ Ղազարյան Լևոնի Ա/Ձ-ն, Բևեռային ուղի ՍՊԸ-ն, Այ Սերվիս ՍՊԸ-ն և Հայկ Բաղդասարյան Ա/Ձ-ն հայտերում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան.

2.3 Ստարտկոպի ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ստարտկոպի ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է մեկ միավոր ծառայության համար:

Հաշվի առնելով նշվածը գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի. <<1. (...): Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:>>,

համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝

<<40. Հայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում (...) գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը (...) ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:>>,

համաձայն սույն գնման ընթացակարգի հրավերի՝

5.3-րդ կետի. << 5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ **պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով** և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Վերը նշված նորմերից հետևում, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին ապա մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա է մերժման:

Իսկ գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնային առաջարկը ըստ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին հարկավոր է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, այսինքն նային առաջարկը պետք է կազմված լինի հետևյալ ձևով՝ **գնման առարկայի քանակ x գնման առարկայի միավորի գին**: Հետևաբար եթե մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը կազմել և ներկայացրել է նշված բանաձևի խախտմամբ ապա այն գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի անբավարար:

Այսինքն, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցը գնային առաջարկը ներկայացնի գնման առարկայի միավորի գնի համար, ապա գնահատող հանձնաժողովը այն պետք է գնահատի որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժի:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Ստարտկոպի ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկը ներկայացրել է միավորի գնով, գանահատող հանձնաժողովը որոշեց՝ մերժել Ստարտկոպի ՍՊԸ-ի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացրած հայտը:

Ընդունել որոշում՝ կողմ ***5 (հինգ),*** դեմ ***0 (զրո)***

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների մասին՝

3.1 Հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

4. Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին՝

4.1 Բողոքներ չեն եղել:

5. Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝

5.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

6. *Մասնակիցների ներկայացրած գների մասին (ՀՀ դրամ)*

Հ/Հ	Ծառայության			Մասնակիցների անվանումները և գնային առաջարկները ՀՀ դրամ						
	անվանումը	չ/մ	քանակը	ԱՁ Հայկ Բարդասարյանի	ԱՁ ԹԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Այ Սերվիս ՍՊԸ	ԱՁ Վիդեո Լոնդոն Ղևոնդ Ղևոնդյան	Բևեռային ուղի ՍՊԸ	Սուպտոկոպի ՍՊԸ	ԱԱՀ
1	քարթրիջների լիցքավորման ծառայություն սև տոներով	հատ	100	116000	148000	260000	300000	118000	1584	առանց ԱԱՀ
								23600	316	ԱԱՀ-ն
				116000	148000	260000	300000	141600	1900	ԱԱՀ-ն ներառյալ
2	քարթրիջների լիցքավորման ծառայություն սև և գույնավոր տոներով	լրակազմ	3	90000	60000	22200	84000	54000	15600	առանց ԱԱՀ
								10800	3120	ԱԱՀ-ն
				90000	60000	22200	84000	64800	18720	ԱԱՀ-ն ներառյալ

7. Կազմակերպված բանակցությունների մասին

7.1 Քանի որ սույն գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գնահատող հանձնաժողովը Ղեկավարվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշեց՝ կասեցնել հայտերի բացման նիստը և մասնակիցներին առաջարկել՝ բանակցությունների վարման մասին

ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 09:50-ին ներկայանալ <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8Ա, գնման առարկա հանդիսացող ապրանքների համար առաջարկված գների նվազեցման նպատակով բանակցությունների, առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով: Բանակցությունների վարման վերջնաժամկետ է սահմանվում՝ բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 10:05-ն

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

8. <u>Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին</u>

Հաշվի առնելով սույն արձանագրության 8-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը և ժամին:

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ)***, *դեմ* ***0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/վարչատնտ. բաժնի պետ/ Աշոտ Հյուսիսյան _____

հանձնաժողովի անդամներ -
/հաշվապահ/ Արմեն Օթարյան _____

/գույքի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ/ Միքայելյան Միքայելյան _____

/գույքի կառավարման բաժնի մասնագետ/ Նվարդ Վարդանյան _____

/պարտքերի վերլուծությունների, մոնիթորինգի և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/ Հայրապետ Բարսեղյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան _____